Արձանագրություն N1

2021թ-ի հոկտեմբերի 1-ին տեղի ունեցավ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանողական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին ուսխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

1.Ծանոթություն:

2. Ուսխորհրդի գործառույթների ներկայացում:

Լսեցին- Ուսխորհրդի համանախագահ Վիգեն Պապոյանը հանդես եկավ իր խոսքով: Վերջինս ուսխորհրդի նոր անդամներին ներկայացրեց ուսխորհրդի էությունը, նշանակությունը ուսումնական հաստատության շրջանակներում, ինչպես նաև նոր անդամները ծանոթացան ուսխորհրդի գործառույթներին և իրենց պարտականություններին: Նիստը ի գիտություն ընդունեց Վիգեն Պապոյանի առաջարկը:

Ուսխորհրդի համանախագահ՝ Վ. Պապոյան

Ուսխորհրդի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

17.09.21թ.

Արձանագրություն N2

2021թ-ի դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանողական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին ուսխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

1.Կազմակերպչական հարցեր :

Լսեցին- Ուսխորհրդի համանախագահ Վիգեն Պապոյանը հանդես եկավ իր խոսքով: Վերջինս տեղեկացրեց, որ ս.թ. դեկտեմբերի 5-ին «Ուրիշ թատրոն»-ի բեմում տեղի կունենա «Ինձ սպասող վախերը» ներկայացման պրիմերիան: Հարկավոր է ստեղծել խմբեր և պատշաճ ձևով դիմավորել հյուրերին:

Նիստը ի գիտություն ընդունեց Վիգեն Պապոյանի առաջարկը:

Ուսխորհրդի համանախագահ՝ Վ. Պապոյան

Ուսխորհրդի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

02.12.21թ.

Արձանագրություն N3

Ս.թ. դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ քոլեջի ուսխորհուրդի հերթական նիստը: Նիստին մասնակցում էին բոլոր անդամները:

Օրակարգ՝

1. Կառավարման խորհրդի ուսանողների կազմի փոփոխություն:
2. Կառավարման խորհրդի գործառույթների ներկայացում:

Լսեցին-1. Ուսխորհրդի համանախագահ Աննա Թաթարյանը հանդես եկավ իր խոսքով: Քանի որ կառավարման խորհրդում ընդգրկված ուսնողները՝ «Դերասնական արվեստ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսնողներ՝ Վիգեն Պապոյանը , Նելլի Խաչատրյանը և «Շուկայաբանություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսնողուհի՝ Անահիտ Թաթարյանը, սովորում են վերջին, ավարտական կուրսերում, հետևաբար, ըստ կարգի, անհրաժեշտ է կատարել կազմի փոփոխություն:

2.Ուսխորհրդի համանախագահ Անահիտ Թաթարյանը ներկայացրեց կառավարման խորհրդի գործառույթները:

Քննարկումներից հետո, առաջադրվեց թվով 6ուսանողների թեկնածություն.

1. Արտյոմ Ավետիսյան- «Ռեժիսուրա» -2-րդ կուրս
2. Միլենա Դանիելյան- «Ռեժիսուրա» -1-ին կուրս
3. Տաթև Շահնազարյան- «Դերասանական արվեստ»-1-ին կուրս
4. Լիլիթ Ղազարյան- «Պարի ուսուցում»- 1-ին կուրս
5. Սերինե Ասատրյան- «Շուկայաբանություն» - 1-ին կուրս
6. Արա Գալստյան - «Ոսկերչություն»-2-րդ կուրս

Փակ քվեարկության արդյունքում ընտրվեցին «Ռեժիսուրա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող՝ Արտյոմ Ավետիսյանը, «Դերասանական արվեստ» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի՝ Տաթև Շահնազարյանը և « Պարի ուսուցում » մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի՝ Լիլիթ Ղազարյանը:

Ժողովի համանախագահ՝ Անահիտ Թաթարյան

Քարտուղար՝ Մանուշակ Գաբրիելյան

21.12.21թ.

Արձանագրություն N4

2022թ.-ի փետրվարի 11-ին տեղի ունեցավ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանողական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին ուսխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում «Տոսկա» օպերայի բեմական փորձի մասնակցության կազմակերպչական հարցեր:

Լսեցին- 1. Իր խոսքով հանդես եկավ ուսխորհրդի համանախագահ Վիգեն Պապոյանը: Վերջինս տեղեկացրեց, որ «Պարի ուսուցում» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողների առաջարկով՝ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ներկա գտնվելու Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում «Տոսկա» օպերայի բեմական փորձին:

Որոշեցին- Վերը նշված պայմանավորվածության մասին տեղեկացնել «Պարի ուսուցում» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողներին, և ուսխորհրդի անդամների հետ 15.02.22թ-ին ներկա գտնվել «Տոսկա» օպերայի բեմական փորձին:

Ուսխորհրդի համանախագահ՝ Վ. Պապոյան

Ուսխորհրդի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

11.02.22թ.

Արձանագրություն N5

2022թ.-ի փետրվարի 16-ին տեղի ունեցավ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանողական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին ուսխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում «Երազ» օպերայի բեմական փորձի մասնակցության կազմակերպչական հարցեր:

Լսեցին- 1. Իր խոսքով հանդես եկավ ուսխորհրդի համանախագահ Վիգեն Պապոյանը: Վերջինս տեղեկացրեց, որ «Պարի ուսուցում» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների առաջարկով՝ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ներկա գտնվելու Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում «Երազ» օպերայի բեմական փորձին:

Որոշեցին- Վերը նշված պայմանավորվածության մասին տեղեկացնել «Պարի ուսուցում» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներին, և ուսխորհրդի անդամների հետ 19.02.22թ-ին ներկա գտնվել «Երազ» օպերայի բեմական փորձին:

Ուսխորհրդի համանախագահ՝ Վ. Պապոյան

Ուսխորհրդի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

16.02.22թ.

Արձանագրություն N6

2022թ-ի ապրիլի 27-ին տեղի ունեցավ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանողական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին ուսխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

1.Համաքաղաքային շաբաթօրյակ, կազմակերպչական հարցեր :

Լսեցին- Ուսխորհրդի համանախագահ Աննա Թաթարյանը տեղեկացրեց, որ ս.թ. ապրիլի 30-ին Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված է համաքաղաքային շաբաթօրյակ:

Հարկավոր է տեղեկացնել քոլեջի բոլոր առաջին կուրսերի ավագներին, և շաբաթօրյակը կազմակերպել պատշաճ և համախմբված:

Նիստը ի գիտություն ընդունեց Անահիտ Թաթարյանի առաջարկը:

Ուսխորհրդի համանախագահ՝ Ա. Թաթարյան

Ուսխորհրդի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

27.04.22թ

Արձանագրություն N7

2022թ-ի մայիսի 3-ին տեղի ունեցավ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանողական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին ուսխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

1. Կազմակերպչական հարցեր:

Լսեցին- Ուսխորհրդի համանախագահ Աննա Թաթարյանը տեղեկացրեց, որ ս.թ. մայիսի 5-ին «Ուրիշ» թատրոնում կկայանա « Չի կարելիի արկածները » ներկայացման պրեմիերան:

Հարկավոր է տեղեկացնել քոլեջի բոլոր ուսանողներին և դասախոսական անձնակազմին, ինչպես նաև ներկայացման օրը հյուրերին դիմավորել պատշաճ մակարդակով:

Նիստը ի գիտություն ընդունեց Անահիտ Թաթարյանի առաջարկը:

Ուսխորհրդի համանախագահ՝ Ա. Թաթարյան

Ուսխորհրդի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

03.05.22թ

Արձանագրություն N8

2022թ-ի հունիսի 15-ին տեղի ունեցավ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանողական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին ուսխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

1.Կազմակերպչական հարցեր :

Լսեցին- Ուսխորհրդի համանախագահ Անահիտ Թաթարյանը հանդես եկավ իր խոսքով: Վերջինս տեղեկացրեց, որ ս.թ. հունիսի 18-ին «Դերասանական արվեստ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները պետք է հանձնեն իրենց դիպլոմային աշխատանքը՝ ներկայացման տեսքով:

Հարկավոր է տեղեկացնել քոլեջի բոլոր կուրսերին, անհրաժեշտության դեպքում օգտակար լինել ներկայացման մասնակիցներին, ինչպես նաև պատշաճ ձևով ընդունել հյուրերին:

Նիստը ի գիտություն ընդունեց Արտյոմ Ավետիսյանի առաջարկը:

Ուսխորհրդի համանախագահ՝ Ա. Թաթարյան

Ուսխորհրդի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

27.06.22թ.

Արձանագրություն N9

2022թ-ի հունիսի 27-ին տեղի ունեցավ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանողական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին ուսխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

1.Կազմակերպչական հարցեր :

Լսեցին- Ուսխորհրդի համանախագահ Անահիտ Թաթարյանը հանդես եկավ իր խոսքով: Վերջինս տեղեկացրեց, որ ս.թ. հունիսի 30-ին «Դերասնական արվեստ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները պետք է հանձնեն իրենց դիպլոմային աշխատանքը՝ ներկայացման տեսքով:

Հարկավոր է տեղեկացնել քոլեջի բոլոր կուրսերին, անհրաժեշտության դեպքում օգտակար լինել ներկայացման մասնակիցներին, ինչպես նաև պատշաճ ձևով ընդունել հյուրերին:

Նիստը ի գիտություն ընդունեց Արտյոմ Ավետիսյանի առաջարկը:

Ուսխորհրդի համանախագահ՝ Ա. Ավետիսյան

Ուսխորհրդի քարտուղար՝ Ս.Ասատրյան

27.06.22թ.

Արձանագրություն N10

2022թ-ի հուլիսի 24-ին տեղի ունեցավ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսխորհրդի հերթական նիստը: Նիստին մասնակցում էին ուսխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

1. Ուսանողական խորհրդի համանախագահների փոփոխություն:

2. Համանախագահների ընտրություն:

1. Լսեցին- Ուսխորհրդի անդամ Սրբուհի Մեծ- Գևորգյանին: Վեջինս նշեց, որ գործող համանախագահներ Վիգեն Պապոյանն ու Անահիտ Թաթարյանը քոլեջն ավարտել կապակցությամբ այլևս չեն կարող շարունակել ուսխորհրդի համանախագահի է ընտրել ուսխորհրդի նոր նախագահ:

2. Քննարկումներից հետո առաջադրվեցին ուսխորհրդի անդամներ երկու ուսանողների թեկնածություններ՝ «Դերասանական արվեստ» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Տաթև Շահնազարյանի և «Ռեժիսուրա» մասնագիտության 1-ին կուրսի ուսանող Արտյոմ Ավետիսյանի թեկնածությունները:

Որոշեցին- 1. Ընդունել և չեղարկել Աննա Թաթարյանի և Վիգեն Պապոյանի գործունեությունը որպես ուսխորհրդի համանախագահ:

2. Ընտրությունների արդյունքում, քոլեջում իրենց ակտիվության, պարտաճանաչության, բարձր առաջադիմության շնորհիվ, ուսխորհրդի համանախագահներ ընտրվեցին վերոնշյալ թեկնածուները:

Ուսխորհրդի անդամ՝ Ս. Մեծ- Գևորգյան

Քարտուղար՝ Ս. Ասատրյան

24.07.20թ.